Հավելված **2**
2023 թ. ապրիլի 1 -ին
կնքված **N** ԵԴ 10 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	Ֆինանսական գրագիտության բարձրացում
Դրամաշնորհի N	«ԵՔ-ԴՄ-ՖԳ 01 /23»
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն հիմնադրամ
Ծրագրի իրականացման ժամանակահատված	01.04.23թ. – 30.06.23թ
Հաշվետու ժամանակահատված	01.07.23 թ. - 30.07.23 թ.
Ներկայացման օր	18.07.23 թ.
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Կարինե Գյադուկյան «Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն հիմնադրամի տնօրեն

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Գործողություն 1.1 Սկսել համագործակցություն Շիրակի մարզի Ամասիա և Մարալիկ համայնքների և Գյումրի քաղաքի համայնքապետարանների/ուսումնական հաստատությունների հետ:

Ապրիլ-հունիս ամիսներին համագործակցություն է հաստատվել «Ամասիայի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի, «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի, Հայաստանի Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղի, «Մարալիկի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի հետ: Պատրաստվել և տնօրեններին են ուղարկվել ծրագրի մանրամասները ներկայացնող գրությունները, ինչից հետո տեղի են ունեցել հանդիպումներ, քննարկվել են ծրագրի գործողությունները և ձեռք բերվել պայմանավորվածություն դասընթացների մեկնարկի և ուսումնառուների հավաքագրման համար /***գրությունների օրինակները կից***/:

Գործողություն 1.2 Համայնքներում ձևավորել 15 հոգանոց աշակերտական և երիտասարդական խմբեր (արդյունքում 90 մասնակից):

Ապրիլ-հունիս ամիսներին Գյումրի, Ամասիա և Մարալիկ համայնքներում ձևավորվել են 6 աշակերտական և երիտասարադական խմբեր, որոնց կողմնորոշիչ հանդիպումների ընթացքում ներկայացվել են «Ֆինանսական գրագիտության բարձրացում» ծրագրի շրջանակներում անցկացվող ֆինանսական գրագիտության բարձրացման դասընթացները և Խնայողությունների խաղը:
Դասընթացներին ընդհանուր մասնակցել են 92 ուսումնառու ***/մասնակցների կողմից լրացված և ստորագրված մասնակցության թերթիկները կից/:***

Գործողություն 1.3 Ձևավորված խմբերի համար կազմակերպել և անցկացնել Ֆինանսական գրագիտության դասընթացներ

Գյումրի, Ամասիա և Մարալիկ համայնքներում ձևավորված 6 երիտասարդական խմբերի համար կազմակերպվել և անցկացվել են ֆինանսական գրագիտության բարձրացման 19 ժամ տևողությամբ դասընթացներ: 2 ժամ հատկացվել է դասընթացի նախնական և ավարտական գնահատման թեսթերը լրացնելու և գիտելիքները գնահատելու համար /***ուսումնառուների կողմից լրացված մինչդասընթացյան և հետդասընթացյան լրացված հարցաթերթերը կից/***:

Ծրագրի իրականացման արդյունքում ուսումնառուները ձեռք են բերել գիտելիքներ և հմտություններ ֆինանսական գրագիտության մասին, մասնավորապես՝ անձնական/ընտանեկան բյուջեի, խնայողությունների և ավանդների, պարտքերի կառավարման, տեղեկությունների հավաքագրման, անձնական շահերի պաշտպանության և ֆինանսական գործիքների անվտանգ օգտագործման վերաբերյալ:
Ուսումնառուները սովորել են տարանջատել եկամուտների և ծախսերի տեսակները, գիտակցել բյուջեի պլանավորման կարևորությունը, կազմել անձնական բյուջե, դասակարգել ծախսերն ըստ առաջնահերթության, բյուջեի վերահսկման հիմնական մոտեցումներն և իմացել են բյուջեի վրա ազդող հիմնական ռիսկերը և դրանց էությունը:

Բանկային ծառայություններից օգտվելու կարգին ծանոթանալուց ուսումնառուները իմացել են բանկային հաշվի և վճարային քարտի բնորոշ գծերը, առավելությունները և ռիսկերը, վճարային քարտերի հիմնական տեսակները, սովորել են ընտրել վճարային քարտ՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները:
Ուսումնառուները հասկացել են խնայողություններ կատարելու կարևորությունը, իմացել են խնայողությունները ներդնելու 3 չափանիշները, ծանոթացել են ներդրումներ կատարելու տարբեր ձևերի առավելություններին և թերություններին:
Պարտքերի կառավարման բաժնում մասնակիցներն իմացել են թե պարտք վերցնելու ինչպիսի աղբյուրներ գոյություն ունեն, դրանց դրական և բացասական կողմերը, սովորել են նախընտրել պարտք վերցնելու ավելի էժան և ոչ ռիսկային տարբերակները, գիտակցել են վարկի և խնայողության տարբերությունները՝ որպես նպատակի հասնելու միջոց, արտարժույթային ռիսկի ազդեցությունը իրենց վրա, իմացել են վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի վերաբերյալ և կարողացել են կիրառել դա, կարողացել են ընտրել վարկ՝ հաշվի առնելով առանձնահատկությունները, ծանոթացել են լիզինգին և դրա հիմնական սկզբունքներին, գիտակցել են իրենց իրավունքները և պարտականությունները վարկային պայմանագիր ստորագրելիս:
Ապահովագրության բաժնում ուսումնառուները ծանոթացել են ապահովագրության սկզբունքներին և տեսակներին, իմացել են, թե ինչին պետք է ուշադրություն դարձնել ապահովագրությունից օգտվելիս և իրազեկվել են Ավտոապահովագրողների բյուրոյի մասին:

Ֆինանսական զեղծարարություններ և խարդախություններ բաժնում ուսումնառուները տեղեկացել են հնարավոր ֆինանսական զեղծարարությունների և խարդախությունների, դրանց հիմնական տեսակների մասին, կարողացել են բացահայտել ֆինանսական զեղծարարությունները և խարդախությունները՝ հիմնվելով որոշ կարևոր սկզբունքների վրա:

Գործողություն 1.4 Ձևավորված խմբերի համար կազմակերպել և անցկացնել Խնայողությունների խաղ:

Գյումրի, Ամասիա և Մարալիկ համայնքներում ձևավորված 6 երիտասարդական խմբերի համար կազմակերպվել և անցկացվել են Խնայողությունների խաղ 9 ժամ տևողությամբ:

Ֆինանսական գրագիտության բարձրացման և Խնայողությունների խաղի անցկացման համար յուրաքանչյուր խումբ մասնակցել է ընդհանուր 30 ժամ տևողությամբ դասընթացի:

Գործողություն 1.5 Դասընթացի արդյունքում դասընթացի մասնակիցներն հանձնել են դասընթացի մասնակցության վկայականներ:

Դասընթացը հաջողությամբ ավարտած 92 մասնակցի վկայականները ուղարկվել են նախարարություն ստորագրելու և կնիքելու համար: Առաջիկայում վկայականները կհանձնվեն դասընթացի մասնակիցներին:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Ծրագրով նախատեսված բոլոր գործողությունները և միջոցառումները իրականացվել են ըստ

սահմանված աշխատանքային պլանի: Նշված գործողությունները լիովին նպաստել են ծրագրի նպատակի և խնդիրների իրականացմանը, ծրագրի շահառու դեռահասների և երիտասարդների մոտ ձևավորվել է հետաքրքրություն, մինչդասընթացյան և հետդասընթացյան հարցաթերթերի ամփոփումն ու վերլուծությունը փաստում են դասընթացի իրականացման անհրաժեշտության և շահառուների շրջանում իրազեկության բարձրացման աճի մասին / ***մինչդասընթացյան և հետդասընթացյան հարցաշարերի վերլուծությունները կից/*** :

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

«Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն հիմնադրամի ֆեյսբուքյան էջի հղումներ
https://www.facebook.com/photo/?fbid=721664223085844&set=pcb.721673086418291

https://www.facebook.com/photo/?fbid=743595167559416&set=pcb.743595650892701

https://www.facebook.com/photo/?fbid=747970390455227&set=pcb.747979217121011

https://www.facebook.com/photo?fbid=750027893582810&set=pcb.750028623582737

https://www.facebook.com/photo/?fbid=755418086377124&set=pcb.755419193043680

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Ծրագրի իրականացման ընթացքում որևէ խնդիր կամ խոչընդոտ չի եղել, համագործակից բոլոր կազմակերպությունները պատրաստակամություն են հայտնել համագործակցել ծրագրի շրջանակներում և ակտիվ ներգրավված են եղել ծրագրի գործողությունների իրականացման ընթացքում: Միակ դժվարությունը, որը ծագել է դասընթացների իրականացման ընթացքում եղել է դասընթացների իրականացման ժամանակահատվածը, քանի որ մայիս և հունիս ամիսները հաստատությունների բարձր դասարանցիների կամ ուսանողների համար ծանրաբեռնված ամիսներ են /թեսթ, ստուգարք, քննություններ/, ինչի պատճառով դասընթացավարներն անընդհատ ստիպված են եղել փոխել հանդիպումների ժամերը:
Որոշակի դժվարություն է առաջացել ծրագրի գնումներն իրականացնելու ընթացքում՝ կապված նախնական գնահարցումների և դրանց պարտադիր լինելու հանգամանքով: Գնահարցումները տեղի են ունեցել և մատակարարները հաստատվել են ծրագրի մեկնարկից 6 ամիս առաջ և ծրագրի իրականացման փուլում որոշ ապրանքներ խանութներում բացակայում էին, մի մասի գներն էլ փոփոխված էին: Տրանսպորտային փոխադրողի պարագայում ծրագրի երկրորդ ամսվա ընթացքում հաղթող կազմակերպությունը լուծարվել է և մենք ստիպված ենք եղել շտապ գտնել նույն պայմաններով ծառայություն մատուցող այլ կազմակերպություն:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

Ծրագիրն արդեն իսկ ավարտված է և որևէ գործողություն չկա հետագայում իրականացնելու և հաշվետվություն ներկայացնելու համար:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Ծրագրի պլանավորման և իրականացման ընթացքում չեն եղել չնախատեսված գործողություններ: Բոլոր գործողությունները եղել են նախատեսված և իրականացվել են ըստ ժամանակացույցի: